

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար

ՍԱՅԱԴ ԽԱԶԱՏՐՅԱՆԸ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 15.12.2016թ թիվ 32-Ն որոշմամբ

ԱՐԵՎՇԱՏ 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանում
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում
5. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում
6. Համայնքի սեփականություն համարվող գույքի (շենքերի, շինությունների և հողամասերի և այլն) կառավարման հնգամյա ծրագիրը
7. ՀԶԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման ձևաչափերը

Եզրափակում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիակի մարզի Արևշատ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածը: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ուղորտներում), ՀԶԲԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները:

ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքում համաչափ զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ոհսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև Արևշատ համայնքի նախկին համայնքների նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, միտումները և դրանց շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2017-21թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՀՀ Շիրակի մարզի Արևշատ գյուղը Արթիկի տարածաշրջանի գյուղերից է: Ըստ պատմական տեղեկությունների գյուղի հիմնադիրները գաղթել են Կարսի Բվիկ, Ջամշու գյուղերից, Սարիղամիշից և Էրզրումից 1823-30 թթ.-ին: Մինչև 1951 թվականը գյուղը կոչվել է Եգանլար, իսկ այնուհետև վերանվանվել է Արևշատ:

Գյուղը ունի միջնակարգ դպրոց, բուժ. Ամբուլատորիա, մշակույթի տուն, նախակրթարան, որոնք բոլորն էլ գործող են: 1992-ից մինչև 1994 թթ-ը գյուղում անցկացվել է սեփականաշնորհման գործընթաց: Գյուղը ունի 2126 բնակիչ, որտեղ բնակվում են բացառապես հայեր:

Արևշատ համայնքը գտնվում է Արագածի հյուսիս-արևմտյան լանջին, ծովի մակերևույթից 1960 մետր բարձրության վրա: Դիրքը լեռնային է, ձմեռը խստաշունչ, տևողությունը վեց ամիս: Գարունը գալիս է ուշացած, ամառը տաք է ու չորային: Հաճախակի է չորային և երաշտի տարիները: Համայնքը սահմանակից է Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Նորաշեն և Սպանդարյան գյուղերին: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ ու հողագործությամբ, մշակում են հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաներ, հիմնականում գազար և կարտոֆիլ:

Գյուղը գտնվում է մայրաքաղաքից 95 կմ, մարզպետարանից 35 կմ, իսկ շրջկենտրոնից 11 կմ հեռավորության վրա:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արևշատ համայնքի բնակիչները ավանդապաշտ և ավանդապահ են՝ միաժամանակ անտարբեր չլինելով նորի նկատմամբ: Պատմության մեջ կան փաստեր, որոնք վկայում են Արևշատի բնակչության համեստ, հարգանքով միևնույն ժամանակ ըմբոստ բնավորության մասին: Ավանդաբար պահպանվել են նվիրվածությունը և հարգանքը ընտանիքի նկատմամբ, հարգանքն աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ: Խոհանոցում պահպանվել են ավանդական ճաշատեսակներ, որոնցով շարունակում են պատվել և զարմացնել հյուրերին:

Արևշատ համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2126 մարդ Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 2050 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 1023 և կանայք՝ 1027: Ըստ բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակում:

Հ/հ	Ցուցանիշները	ԱՐԵՎՇԱՏ
-----	--------------	---------

1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում`	2126
2	Տղամարդիկ	1062
3	Կանայք	1064
4	0-4 տարեկան	142
5	5-6 տարեկան	75
6	7-10 տարեկան	111
7	11-14 տարեկան	124
8	15-17 տարեկան	94
9	18-22 տարեկան	123
10	23-45 տարեկան	802
11	46-62 տարեկան	524
12	63 և բարձր տարիքի	131
13	Կենսաթոշակառուներ, այդ թվում`	211
14	Տարիքային և աշխատանքային	155 և 56
15	Փախստականներ	0
16	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	15
17	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
18	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
19	Արցախյան պատերազմի մասնակիցներ	15
20	Հաշմանդամներ, այդ թվում`	55
21	Մանկուց հաշմանդամներ	17
22	Աշխատունակներ	1820
23	Զբաղվածներ	1060
24	Գործազուրկներ	570
25	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	75
26	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	0
27	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում`	2
28	Անօթևան ընտանիքներ	0
29	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	2
30	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	67
31	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	67

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Արևշատ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 7 անդամներով : Արևշատ համայնքի աշխատակազմը բաղկացած է 10 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Արևշատ համայնքի կենտրոնում: Շենքի ընդհանուր վիճակը լավ է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքի մի մասը նորացված է: Համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 22-Ա որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը-9

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Ընդամենը (դրամ)
Հայեցողական պաշտոններ							
1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	160000	80	1	160000	160000
Համայնքային ծառայության պաշտոններ							
2	Աշխատակազմի քարտուղար	1	160000	80	1	160000	160000
4	Գլխավոր մասնագետ	2	155000	77.5	1	155000	310000
5	Առաջի կարգի մասնագետ	1	121000	60.5	1	121000	242000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ							
6	Ջրերի ներքին ցանցի հսկիչ	1	121000	60.5	1	121000	121000
7	Համակարգչային օպերատոր	1	91000	45.5	1	91000	91000
8	Խմելու ջրի հսկիչ	1	72752	36.3	1	72752	72752
9	Հավաքարար	1	72752	36.3	1	72752	72752
Ընդամենը		9	953504	-		953504	1108504

1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Հանրակրթական դպրոցի		Առողջապահական հիմնարկի		Փոստային բաժանմունքի առկայությունը	Այլ նշումներ
		Տեսակը	անվանումը	տեսակը	անվանումը		
1.	Արևշատ	միջնակարգ	Արևշատի Մետաքսեի անվան դպրոց ՊՈԱԿ	Բուժ. կետ	Ամբուլատորիա	Առկա է	

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբը տեղափոխվում և կուտակվում է կենտրոնացված աղբավայրերում, որտեղ պարբերաբար կատարվում են բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է բավարար տեխնիկայի պայմաններում:

Համայնքի ունի գլխավոր հատակագիծ:

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 90 %-ը: Բնակավայրերում լուսավորության ցանցը կառուցված է գրեթե ամբողջովին: Խմելու ջրի մատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը: Բացի այդ, խողովակաշարի ներքին ցանցը գտնվում է անմխիթար վիճակում և չի կարող դիմակայել մեծ ճնշմանը:

Գյուղը գազաֆիկացված է: Բնակելի տների 50 տոկոսը և դպրոցը օգտվում են գազաֆիկացումից, սակայն անհրաժեշտություն կա ևս գազաֆիկացնել բնակավայրի մյուս մասերը:

Բնակավայրում կատարվել է գերեզմանատան ցանկապատում, նորոգվել է հիմնական երկու երկաթյա դարպասները:

Համայնքի գրեթե բոլոր բնակելի տները կառուցված են քարից և հարմարեցված Ներկա ապրելակերպին: Գյուղում հողամասերի միջին չափը 2500 մերս է:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում բնակելի տները հիմնականում առանձնատներ են, որոնց թիվը կազմում է 385: Բնակավայրերում կան նաև բավականին շատ երկհարկանի տներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 38500 քմ:

Համայնքում պարբերաբար վերանորոգումներով առանձնատները գտնվում են լավ վիճակում:

1.8 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքում գյուղատնտեսությունը իրականացվում է հողագործության և անասնապահության տեսքով՝ բարձր լեռնային բնակլիմայական և մշակման ագրոտեխնիկական պայմաններին բնորոշ ձևով: Հողագործությունը իրականացվում է անհատական տնտեսությունների միջոցով, սեփականաշնորհված և վարձակալված հողամասերում: Համայնքին բնորոշ մշակվող գյուղատնտեսական կուլտուրաներն են կարտոֆիլը, կաղամբը, գազարը և հացահատիկային կուլտուրաները:

Համայնքի հողային հաշվեկշիռը ունի հետևյալ տեսքը՝

1. Ըստ հողատեսքերի	
- Համայնքի վարչական տարածքը	2725.5 հա է, որից
- Տնամերձ հողամասեր	181.6հա
- Սեփականաշնորհված հողեր	814.59հա
- Արտավայրեր	1331.55հա
- Խոտհարկ	7.42հա
- Բնակարանային տարածք	35.0 հա
- Պահուստային հողեր	0.0հա
- Անօգտագործելի տարածք	24.4հա
- Ջրանձրներ	1.23 հա
- Դաշտային ճանապարհներ	5.5հա
- Արտադրական մաս	13.96հա
- Դպրոց	2.58հա
- Հուշարձան, գերեզմանոց	1.47հա
- Գյուղամիջյան փողոց	6.5հա
- Մեկ հողաբաժնի չափը	0.85հա

1.9 ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Մակայն հողատարածքների ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Արևշատ համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Մակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Համայնքաբնակները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսությունները սակավաթիվ են: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում:

Բնակիչները իրենց տնամերձ հողամասերում աճեցնում են բանջարաբուստանային կուլտուրաներ: Համայնքը ոռոգվում է ինքնահոս համակարգի միջոցով: Ոռոգելի ցանց բավականին հին է և կարիք ունի նորացման:

ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Խոշոր եղջերավոր անասուններ	1827
- Մանր եղջերավոր անասուններ /ոչխարներ/	294
- Խոզեր	40
- Մեղվաընտանիքներ	113
- Բանող անասուններ / ձիեր/	0
- Թռչուններ	1776

Անասնապահության բնագավառում հիմնական ցուցանիշները

- Միս	550.0 հզ. Կգ
- Կաթ	1500.0 հզ. Կգ
- Գյուղատնտեսության ցուցանիշներ, որից	
- Կարտոֆիլ	22525 կգ
- Հաց. Կուլտուրաներ	1499.6կգ
- Կաղամբ	800.0 կգ

Համայնքում արտադրված գյուղատնտեսական ապրանքները հիմնականում իրացվում են համայնքում, հարակից գյուղերում, Գյումրի, Արթիկ և Երևան քաղաքներում:

1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները,
- բարեկարգել զբոսայգիները,
- աղբավայրում ստեղծել աղբի տեսակավորման հնարավարություն,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ներհամայնքային ցանցի երկարությունը 14 կմ է, որի 1.8 կմ հատվածը ասֆալտապատ է, իսկ 12.2 կմ գրունտային ծածկույթ: Գյուղում կա 2 կամուրջ, որոնք երկաթ բետոնից են: Գյուղում հաշվում է մոտ 350 տարբեր տեսակի տրանսպորտային միջոց:

1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արևշատ համայնքում առևտուրն իրականացվում է անհատների և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի խանութներ, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ, ռեստորան և հյուրատուն:

Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ և այլն):

Համայնքում գործում է «Արոտ օգտագործողների սպառողական կոոպերատիվ», որը համալրված լինելով որոշակի գյուղատեխնիկայով, մատուցում են գյուղատնտեսական աշխատանքների ծառայություններ:

Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպություններ չկան:

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում են հանրակրթական միջնակարգ դպրոց, որը կառուցվել է 1985 թ-ին և հիմնանորոգվել 2011 թվականին: Համայնքի դպրոցը գտնվում է գերազանց վիճակում, ջեռուցվում է գազով:

Դպրոցը նախատեսված է 400 աշակերտի համար: Դպրոցի շենքում գործում է նաև նախակրթարան, որտեղ երեխաների թիվը հասնում է 60-ի

Ցուցանիշները` ուսուցիչների թիվը - 40

Աշակերտների թիվը - 400

1.14 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքը ունի մշակութային տուն, եկեղեցի, անտառային գեղեցիկ գոտի, որոնք գտնվում են գերազանց վիճակում: Մշակույթի տանը պահվում են հին գյուղատեղիում պահպանված տեղաբնակների զբաղմունքի ու կենցաղավարության մասին պատմող եզակի նմուշներ: Մշակույթի տանը գործում են բազմաթիվ խմբակներ: Համայնքում տեղի են ունենում տարբեր տեսակի մշակութային միջոցառումներ:

Համայնքում գոյություն ունեն գործող գրադարաններ:

1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում աշխատում է բուժ. ամբուլատորիա, որը արդիական բժշկական սարքերով համալրման կարիք ունի: Բուժհաստատությունը հիմնականում իրականացնում է առաջին բուժօգնության

ծառայություններ: Տեղի ունեցող հիմնական դեպքերի ժամանակ շտապ օգնությունը հասնում է Արթիկ, կամ Գյումրի քաղաքներից:

Համայնքապետարանը կազմակերպում և անց է կացնում ներհամայնքային ֆուտբոլի, շաշկու, շախմատի մրցումներ: Քայլեր են ձեռնարկվում համայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Սպորտը առավել զարգացնելու համար համայնքին անհրաժեշտ է ունենալ մեծ սպորտային կոմպլեքս: Համայնքի տարածքում սպորտդահլիճ առկա է միայն դպրոցում, որտեղ կա համապատասխան գույք: Բնակավայրում առկա է բացօթյա խաղահրապարակներ, որտեղ տեղադրված է վոլեյբոլ և վասկետբոլ խաղալու համար համապատասխան սպորտային գույք:

1.16 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի բնակավայրում կառուցվել է զբոսայգիներ: Բնակավայրի դպրոցի տարածքում կառուցված է մանկապարտեզի խաղահրապարակ, զբոսայգի: Բնակավայրում առկա է կենտրոնական հատվածում տեղադրված զբուցարաններ, որոնք էլ ծառայում են մեծահասակներին մի պահ առօրյա հոգսերից կտրելու, այդտեղ իրենց կարճատև հանգիստը կազմակերպելու նպատակով:

Համայնքից 2 կմ հեռավորության վրա կառուցվել է անտառային գոտի, որտեղ տեղադրված է հարմարավետ մեծ զբուցարան , ապահովված է խմելու ջրով և բնակիչներին իրենց հանգիստը անցկացնելու համար բոլոր տեսակի հարմարություններով:

1.17 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող մեծ գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչության աշխատանքի տեղավորվելու և աշխատելու հույսը մնում է միայն համայնքապետարանում, քիչ թվով գործող և սակավաթիվ աշխատատեղեր ապահովվող ՊՈԱԿ-ներում, հանրային սնունդ սպասարկող հիմնականում սեզոնային օբյեկտներում և երիտասարդների համար արդեն ավանդույթ դարձած արտագնա աշխատանքի մեկնում:

Համայնքապետարանը օգնություն է ցուցաբերում սոցիալապես անապահով ընտանիքներին:

Աղյուսակում ներկայացված են համայնքում եղած աշխատունակ և գործազուրկ մարդկանց, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողազուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներ:

Արևշատ համայնքի աշխատունակների և գործազուրկների, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողազուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներն ըստ բնակավայրերի

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	18
2.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	0
3.	Հաշմանդամներ, այդ թվում`	21
4.	Մանկուց հաշմանդամներ	21
5.	Աշխատունակներ	1800
6.	Զբաղվածներ	1060
7.	Գործազուրկներ	700
8.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	72

1.18 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը` www.arevshat.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում և բնակավայրերի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

1.19 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Արևշատ համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները` ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ: Բնակավայրերում եղած թաքստոցները հաճվառված են համայնքապետարանի կողմից:

1.20 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Հ/հ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2015թ. փաստ.	2016թ. փաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1.	Համայնքի վարչական տարածքը	հա	2725.5	2725.5	2725.5	2725.5	2725.5	2725.5	2725.5
2.	Բնակչության թիվը	մարդ	2122	2126	2130	2137	2145	2152	2160
	Անհատական բնակելի տների թիվը	տուն	375	375	375	376	377	378	400
	Անհատական բնակելի տների մակերեսը	հազ.քմ	37500	37500	37500	37600	37700	37800	40000
4.	Վթարային շենքերի թիվը	շենք	0	0	0	0	0	0	0
6.	Ավտոտնակների թիվը	հատ	154	154	157	160	162	165	170
7.	Համատիրությունների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
8.	Տեղափոխվող աղբի քանակը	տոննա	60	60	70	90	95	100	110
	Այդ թվում բնակչությունից		59	59	69	89	94	99	109
	Աղբավայրի առկայությունը և զբաղեցրած տարածքը	հազ. քմ	0	0	0	0	0	0	0
9.	Սանիտարական մաքրման և աղբահանության մեքենայական պարկի մեքենա-մեխանիզմներ քանակը	միավոր	0	0	0	0	0	0	0
11.	Ոռոգման ցանցի երկարությունը	կմ	14	14	14	14	15	16	18
13.	Միջբնակավայրային ճանապարհների երկարությունը	կմ	15	15	15	15	15	15	15
15	Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	2	2	2	2	2	2	2
	առևտրի օբյեկտներ	հատ	3	3	4	5	5	5	5
	ժ. 24-ից հետո աշխատող օբյեկտներ	հատ	0	0	0	0	0	0	0
	Բենզինի լիցքավորման կետեր	հատ	0	0	0	0	0	0	0
	Գազի լիցքավորման կետեր	հատ	0	0	0	0	0	0	0
20.	Բնակարանի կարիքավոր ընտանիք. թիվը	ընտ.	3	3	3	3	3	2	2
21.	Բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ընտանիքներ	- // -	30	28	25	20	20	15	5
	Երեխաների թիվը	մարդ	50	60	60	62	65	65	70
	Խմբերի թիվը	խումբ	2	2	2	2	2	2	2
23.	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
	Աշակերտների թիվը	մարդ	360	360	360	360	362	363	365
24.	Երաժշտական դպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
25.	Մարզադպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
26.	Արտադպրոցական հիմնարկների թիվը	հատ	0	0	0	0	0	0	1
27.	Ակումբների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
28.	Հիվանդանոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0

	Մահճակալների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
29.	Պոլիկլինիկա-ամբուլատորիաների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
30.	Կենսաթոշակառուների թիվը	մարդ	125	125	125	125	125	125	125
31.	Հաշմանդամների թիվը	մարդ	30	30	30	30	30	30	30
32.	Արտագնա/սեզոնային/աշխատանքի մեկնողների թիվը	մարդ	75	75	75	75	75	75	75
33.	Գործազուրկների թիվը	մարդ	700	700	700	680	670	650	600
34.	Փախստականների թիվը	մարդ	0	0	0	0	0	0	0
35.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտ.	72	72	70	70	68	65	60
36.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	հազ. դրամ	33.4	52.3	26.0	31.8	34.8	38.0	44.1
37.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսը	հազ. դրամ	33.4	52.3	26.0	31.8	34.8	38.0	44.1
40.	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	%	100	100	100	100	100	100	100
41.	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	%	100	100	100	100	100	100	100
42.	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	%	100	100	100	100	100	100	100

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՇՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքը ունի 1000 աշխատող, որը կարող է տարեկան տալ 2050 տոննա բնամթերք: Կան պոտենցիալ հնարավորություններով բավականին մեծ թվով բարձրագույն կրթություն ունեցող, բայց աշխատանք չունեցող մարդիկ:

Համայնքը ունի մասնագիտական կադրերով հագեցած գյուղապետարան, մարզում լավագույներից մեկը հանդիսացող միջնակարգ դպրոց և վերապատրաստված մասնագետներով բուժ. Ամբուլատորիա:

Համայնքում գործող վերջին տարներին ավելացած հասարակական կառույցներում որոշակի մարդիկ ներգրավել են և նրանք ապահովել են աշխատանքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքում մեծ թիվ է կազմում արտագնա աշխատողների թիվը:

Համայնքի համար մշտական խնդիր է խմելու և ոռոգման ջրի հարցը: Շատ քիչ է գյուղացու արտադրած բնամթերքի իրացման հնարավորությունը:

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- ✓ Համայնքի ենթակառուցվածքների (փողոցներ, ջրամատակարարման ցանցեր, և այլն) ոչ բարվոք վիճակը
- ✓ Բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- ✓ Գյուղմթերքների իրացման հնարավորությունը
- ✓ Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը (հիմնական նպատակը համայնքաբնակների համար աշխատատեղերի ստեղծում)
- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացումը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, սողանքների առաջացում)
- ✓ Գործազրկության մակարդակի աճը
- ✓ Բնակֆոնդի վիճակի վատթարացումը
- ✓ Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Արևշատի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, համայնքի տարածքում կարող է բնակվել առավելագույնը 5.0 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Արևշատ համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում հումքային, սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

Բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, գյուղը դարձնել բարեկարգ, գրավիչ և մաքուր բնակավայր:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

- ✓ Ապահովել համայնքի՝ համամասնական զարգացումը
- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն են՝**

ա/ համայնքի զազաֆիկացման ներքին ցանցի /ընդլայնում/կառուցում

բ/ Կիսակառույց մանկապարտեզի կառուցում

գ/ Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում

դ/ Հյուսիս-արևելյան թաղամասի ջրաֆիկացում

ե/ Ոռոգման ցանցի վերանորոգում

զ/ Գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում

է/ Սպորտի զարգացում

ը/ Գյուղատնտեսության և անասնապահության շահույթաբերության բարձրացում

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Արևշատում գալիք 2017-2021թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում:
- Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում, պատսպարանների և թաքստոցների կառուցում:

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Շիրակի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ:

ԾՐԱԳՐ 1

Մշակույթ

Մշակույթի տան դահլիճի վերնորոգում և կահավորում

Արևշատի համայնքապետարան

Ծրագրի ընդհանուր արժեքը 10800.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- ✓ Ծառայությունների մատուցում

- ✓ Գույքի ձեռքբերում
- ✓ Վերականգնում

Ծրագրի հիմնավորումը

Մշակույթի դահլիճը գտնվում է անմխիթար վիճակում, մշակույթի հետ կապված չենք կարողանում որևէ մեծ միջոցառում անցկացնել, համերգներ, թատերական ներկայացումներ և նմանատիպ միջոցառումների անցկացման հետ կապված կան մեծ խնդիրներ

Ծրագրի նպատակները

Ունենալ մեծ, հարմարավետ և գեղեցիկ դահլիճ, մի շարք միջոցառումներ և ժողովներ անցկացնելու համար: Կուլտուր մակարդակի բարձրացում:

Ծրագրի խնդիրները

- ✓ Նախապատրաստել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել հանդիսությունների
- ✓ Գույքի ձեռք բերում

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախապատրաստել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը				x								
2.	Հայտարարել մրցույթ և ընտրել կապալառուին					x	x						
3.	Իրականացնել հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքները					x	x	x					
4.	Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել հանդիսությունների							x	x				
5.	Գույքի ձեռք բերում									x			
6.													
7.													

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ակտիվացում

մ, միջոցառումների կազմակերպում, համերգների, թատրոնների կազմակերպում

Կապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագիրը կապված է համյնքային մյուս ծրագրերի հետ

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի եկամուտները

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	10800.0					10800.0
1.	Համայնքի բյուջեի մուտքեր	4000.0					4000.0
	- Վարչական բյուջե						
	- Ֆոնդային բյուջե	4000.0					4000.0
2.	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	6800.0					6800.0
	- Այլ պետությունների համայնքներից						
	- Միջազգային կազմակերպություններից						
3.	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ						
	- Պետական բյուջեից այլ դոտացիաներ						
	- Պետական բյուջեից նպատակային հատկացումներ						
	- ՀՀ այլ համայնքներից պաշտոն. դրամաշնորհներ						
4.	Պետական բյուջեից վարկ						
5.	Առևտրային բանկից վարկ						
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից						
7.	Մասնավոր (բիզնես) հատվածի ներդրումներ						
8.	Բնակչության ներդրումներ						
9.	Այլ						

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝	10800.0					10800.0
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	4000.0					4000.0
1.1	Աշխատանքի վարձատրություն, որից						
	- Աշխատավարձեր և հավելավճարներ						
1.2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում, որից						
	- Գործառն. և բանկային ծառայությունների ծախսեր						
	- Էներգետիկ ծառայություններ						
	- Կոմունալ ծառայություններ						
	- Կապի ծառայություններ						
	- Սպահովագրական ծախսեր						
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն						
	- Ներքին գործուղումներ						
	- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր						
	- Այլ տրանսպորտային ծախսեր						
	- Վարչական ծառայություններ						
	- Համակարգչային ծառայություններ						
	- Աշխատակազմի մասնագ. զարգ. ծառայություններ						
	- Տեղեկատվական ծառայություններ						
	- Կառավարչական ծառայություններ						
	- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ						
	- Ներկայացուցչական ծախսեր						
	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ						
	- Մասնագիտական այլ ծառայություններ						
	- Շենքերի և կառ.-ի ընթացիկ նորոգում և պահպանում	4000.0					4000.0

	- Մեքեն. և սարք.-ի ընթացիկ նորոգում և պահպանում					
	- Գրասենյակային նյութեր և հագուստ					
	- Գյուղատնտեսական ապրանքներ					
	- Վերապատրաստման և ուսուցման նյութեր					
	- Տրանսպորտային նյութեր					
	- Շրջակա միջավայրի պահպ.-ան և գիտական նյութեր					
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր					
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր					
	- Հատուկ նպատակային այլ նյութեր					
1.3	Տոկոսավճարներ					
1.4	Սուբսիդիաներ, այդ թվում					
	- Սուբսիդիաներ պետական (համայնքային) կազմ.-ին					
	- Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) կազմակերպություններին					
1.5	Դրամաշնորհներ, այդ թվում					
	- Ընթացիկ դրամաշնորհներ					
	- Կապիտալ դրամաշնորհներ					
1.6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ					
	- Սոցիալական ապահովության նպաստներ					
	- Սոցիալական օգնության նպաստներ					
	- Կենսաթոշակներ					
1.7	Այլ ծախսեր					
	- Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին					
	- Այլ ծախսեր					
	- Պահուստային միջոցներ					
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՄԵՐ,	6800.0				6800.0
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում	6800.0				6800.0
	Շենքեր և շինություններ, որից					
	- Շենքեր և շինությունների ձեռքբերում					
	- Շենքեր և շինությունների կառուցում					
	- Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում					
	Մեքենաներ և սարքավորումներ, որից					
	- Տրանսպորտային սարքավորումներ					
	- Վարչական սարքավորումներ					
	- Այլ մեքենաներ և սարքավորումներ					
	Այլ հիմնական միջոցներ					
1.2	Պաշարներ					
1.3	Բարձրարժեք ակտիվներ					

ԾՐԱԳԻՐ 2

Սպորտ

Մարզադաշտի նորոգում

Արևշատի համայնքապետարան

Ծրագրի ընդհանուր արժեքը 5000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- ✓ Վերականգնում
- ✓ Ընդլայնում
- ✓ Կապիտալ նորոգում

Ծրագրի հիմնավորումը

Մարզադաշտը գտնվում է անմխիթար վիճակում: Մարզադաշտ չունենալու պատճառով ոչ մի սպորտային միջոցառումներ չի անցկացվում:

Ծրագրի նպատակները

Ունենալ մեծ, հարմարավետ և գեղեցիկ մարզադաշտ: Անցկացնել մի շարք սպորտային միջոցառումներ: Կուլտուր մակարդակի բարձրացում:

Ծրագրի խնդիրները

- ✓ Հաշվարկել ֆուտբոլի դաշտի և խաղահրապարակի համար անհրաժեշտ նյութերի քանակներն ու ծավալները
- ✓ Գնահարցման միջոցով ձեռք բերել համապատասխան նյութերը
- ✓ Իրականացնել ֆուտբոլի դաշտի և խաղահրապարակի վերանորոգման աշխատանքները

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Z/ h	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Հաշվարկել ֆուտբոլի դաշտի և խաղահրապարակի համար անհրաժեշտ նյութերի քանակներն ու ծավալները				x								
2.	Գնահարցման միջոցով ձեռք բերել համապատասխան նյութերը					x							
3.	Իրականացնել ֆուտբոլի դաշտի և խաղահրապարակի վերանորոգման աշխատանքները					x	x	x	x				
4.													
5.													
6.													
7.													

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ակտիվացում, միջոցառումների կազմակերպում, երիտասարդներին սպորտի բնագավառում ներառում:

Կապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագիրը կապված է համյնքային մյուս ծրագրերի հետ

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի եկամուտները

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		5000.0				5000.0
1.	Համայնքի բյուջեի մուտքեր		1500.0				1500.0
	- Վարչական բյուջե		1500.0				1500.0
	- Ֆոնդային բյուջե						
2.	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ		3500.0				3500.0
	- Այլ պետությունների համայնքներից						
	- Միջազգային կազմակերպություններից		3500.0				3500.0
3.	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ						
	- Պետական բյուջեից այլ դոտացիաներ						
	- Պետական բյուջեից նպատակային հատկացումներ						
	- ՀՀ այլ համայնքներից պաշտոն. դրամաշնորհներ						
4.	Պետական բյուջեից վարկ						
5.	Առևտրային բանկից վարկ						
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից						
7.	Մասնավոր (բիզնես) հատվածի ներդրումներ						
8.	Բնակչության ներդրումներ						
9.	Այլ						

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝		5000.0				5000.0
Ա.	ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝		5000.0				5000.0
1.1	Աշխատանքի վարձատրություն, որից						
	- Աշխատավարձեր և հավելավճարներ						
1.2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում, որից						
	- Գործառն. և բանկային ծառայությունների ծախսեր						
	- Էներգետիկ ծառայություններ						
	- Կոմունալ ծառայություններ						
	- Կապի ծառայություններ						
	- Ապահովագրական ծախսեր						
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն						
	- Ներքին գործուղումներ						
	- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր						
	- Այլ տրանսպորտային ծախսեր						
	- Վարչական ծառայություններ						
	- Համակարգչային ծառայություններ						
	- Աշխատակազմի մասնագ. զարգ. ծառայություններ						
	- Տեղեկատվական ծառայություններ						
	- Կառավարչական ծառայություններ						
	- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ						
	- Ներկայացուցչական ծախսեր						

	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ					
	- Մասնագիտական այլ ծառայություններ					
	- Շենքերի և կառ.-ի ընթացիկ նորոգում և պահպանում		5000.0			5000.0
	- Մեքեն. և սարք.-ի ընթացիկ նորոգում և պահպանում					
	- Գրասենյակային նյութեր և հազուստ					
	- Գյուղատնտեսական ապրանքներ					
	- Վերապատրաստման և ուսուցման նյութեր					
	- Տրանսպորտային նյութեր					
	- Շրջակա միջավայրի պահպ.-ան և գիտական նյութեր					
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր					
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր					
	- Հատուկ նպատակային այլ նյութեր					
1.3	Տոկոսավճարներ					
1.4	Սուբսիդիաներ, այդ թվում					
	- Սուբսիդիաներ պետական (համայնքային) կազմ.-ին					
	- Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) կազմակերպություններին					
1.5	Ղրամաշնորհներ, այդ թվում					
	- Ընթացիկ ղրամաշնորհներ					
	- Կապիտալ ղրամաշնորհներ					
1.6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ					
	- Սոցիալական ապահովության նպաստներ					
	- Սոցիալական օգնության նպաստներ					
	- Կենսաթոշակներ					
1.7	Այլ ծախսեր					
	- Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին					
	- Այլ ծախսեր					
	- Պահուստային միջոցներ					
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՄԵՐ,					
	այդ թվում՝					
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում					
	Շենքեր և շինություններ, որից					
	- Շենքեր և շինությունների ձեռքբերում					
	- Շենքեր և շինությունների կառուցում					
	- Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում					
	Մեքենաներ և սարքավորումներ, որից					
	- Տրանսպորտային սարքավորումներ					
	- Վարչական սարքավորումներ					
	- Այլ մեքենաներ և սարքավորումներ					
	Այլ հիմնական միջոցներ					
1.2	Պաշարներ					
1.3	Բարձրարժեք ակտիվներ					
1.4	Զարտադրված ակտիվներ, այդ թվում					
	- հող					
	- այլ շարտադրված ակտիվներ					

ԾՐԱԳԻՐ 3

Տնտեսական հարաբերություն, Գյուղատնտեսություն

ԶՐԱԳԾԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ

Արևշատի համայնքապետարան

Ծրագրի ընդհանուր արժեքը 150.0 մլն. դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- ✓ Վերականգնում
- ✓ Ընդլայնում
- ✓ Փոխարինում

Ծրագրի հիմնավորումը

Ցանցը քայքայված է, գտնվում է անմխիթար վիճակում: Ունենք ջրի մեծ կորուստ : Մպասարկումը դառնում է անկառավարելի:

Ծրագրի նպատակները

Ջրի կորուստների նվազում: Ունենալ մաքուր և շուրջօրյա ջուր:

Ծրագրի խնդիրները

- ✓ Նախապատրաստել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը
- ✓ Հայտարարել մրցույթ, ընտրել կապալառուին
- ✓ Իրականացնել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել ոռոգման ջրի

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախապատրաստել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը				x								
2.	Հայտարարել մրցույթ, ընտրել կապալառուին					x							
3.	Իրականացնել ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքները					x	x	x	x				
4.	Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել ոռոգման ջրի									x			

5.													
6.													
7.													

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Կարգավորել 28 կմ հատվածի, առանց շեղումների, ջրի սպասարկում: Սպասարկել մաքուր առանց կորուստների ջուր, ունենալ շուրջօրյա ջրամատակարարում:

Կապը այլ ծրագրերի հետ

Այս ծրագիրը կապված է համայնքային մյուս ծրագրերի հետ

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի եկամուտները

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամենը
		2017	2018	2019	2020	2021	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ			150000.0			150000.0
1.	Համայնքի բյուջեի մուտքեր			7000.0			7000.0
	- Վարչական բյուջե			7000.0			7000.0
	- Ֆոնդային բյուջե						
2.	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ			143000.0			143000.0
	- Այլ պետությունների համայնքներից						
	- Միջազգային կազմակերպություններից			143000.0			143000.0
3.	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ						
	- Պետական բյուջեից այլ դոտացիաներ						
	- Պետական բյուջեից նպատակային հատկացումներ						
	- ՀՀ այլ համայնքներից պաշտոն. դրամաշնորհներ						
4.	Պետական բյուջեից վարկ						
5.	Առևտրային բանկից վարկ						
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից						

7.	Մասնավոր (բիզնես) հատվածի ներդրումներ						
8.	Բնակչության ներդրումներ						
9.	Այլ						

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝			150000.0			150000.0
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝						
1.1	Աշխատանքի վարձատրություն, որից						
	- Աշխատավարձեր և հավելավճարներ						
1.2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում, որից						
	- Գործառն. և բանկային ծառայությունների ծախսեր						
	- Էներգետիկ ծառայություններ						
	- Կոմունալ ծառայություններ						
	- Կապի ծառայություններ						
	- Ապահովագրական ծախսեր						
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն						
	- Ներքին գործուղումներ						
	- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր						
	- Այլ տրանսպորտային ծախսեր						
	- Վարչական ծառայություններ						
	- Համակարգչային ծառայություններ						
	- Գյուղատնտեսական ապրանքներ						
	- Վերապատրաստման և ուսուցման նյութեր						
	- Տրանսպորտային նյութեր						
	- Շրջակա միջավայրի պահպ.-ան և գիտական նյութեր						
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր						
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր						
	- Հատուկ նպատակային այլ նյութեր						
1.3	Տոկոսավճարներ						
1.4	Սուբսիդիաներ, այդ թվում						
	- Սուբսիդիաներ պետական (համայնքային) կազմ.-ին						
	- Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) կազմակերպություններին						
1.5	Դրամաշնորհներ, այդ թվում						
	- Ընթացիկ դրամաշնորհներ						
	- Կապիտալ դրամաշնորհներ						
1.6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ						
	- Սոցիալական ապահովության նպաստներ						
	- Սոցիալական օգնության նպաստներ						
	- Կենսաթոշակներ						
1.7	Այլ ծախսեր						
	- Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին						
	- Այլ ծախսեր						
	- Պահուստային միջոցներ						
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝			150000.0			150000.0

1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում			150000.0			150000.0
	Շենքեր և շինություններ, որից						
	- Շենքեր և շինությունների ձեռքբերում						
	- Շենքեր և շինությունների կառուցում			150000.0			150000.0
	- Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում						
	Մեքենաներ և սարքավորումներ, որից						
	- Տրանսպորտային սարքավորումներ						
	- Վարչական սարքավորումներ						
	- Այլ մեքենաներ և սարքավորումներ						
	Այլ հիմնական միջոցներ						
1.2	Պաշարներ						
1.3	Բարձրարժեք ակտիվներ						
1.4	Չարտադրված ակտիվներ, այդ թվում						
	- հող						
	- այլ չարտադրված ակտիվներ						

ԾՐԱԳԻՐ 4

Համայնք, կուլտուր կենցաղային մակարդակի բարձրացում

ԳԱԶԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Արևշատի համայնքապետարան

Ծրագրի ընդհանուր արժեքը 15.0 մլն. դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- ✓ Նորը
- ✓ Ընդլայնում

Ծրագրի հիմնավորումը

Գյուղի որոշ թաղամասեր գազաֆիկացված չէ, կա անհրաժեշտություն, բնակչության ցանկությունները մեծ է:

Ծրագրի նպատակները

Գազաֆիկցնել ամայնքի ամբողջ տարածքը: Ունենալ գազով ապահովված տներ:

Ծրագրի խնդիրները

- ✓ Նախապատրաստել թաղերի գազաֆիկացման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- ✓ Դիմել Հայ-Ռուս գազարդ ընկերությանը գազաֆիկացումն անցկացնելու նպատակով, հայտարարել մրցույթ
- ✓ Իրականացնել թաղերի գազաֆիկացման աշխատանքները
- ✓ Իրականացնել տեխնիկական վերահսկողություն և ընդունել թաղերի գազաֆիկացման աշխատանքների կատարման ավարտական ակտը

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախապատրաստել թաղերի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը			x									
